ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

31.03.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 281-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎՐՈՒՅՐ ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 161-Ն որոշումը և անհատ ձեռնարկատեր Վրույր Ղևոնդյանի (ՀՎՀՀ 77910464) ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու մասին հայտը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Բավարարել անհատ ձեռնարկատեր Վրույր Ղևոնդյանի կողմից 2023 թվականի համար ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Անկախության փողոցի թիվ 7/22/2 հասցեում գտնվող առևտրի սրահում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու հայտը:

2.Աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ երեք օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/31/03
Ք.Գորիս